



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ԳԵՂԱՐՔՈՒՆԻ ՔԻՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ  
Գ Լ Խ Ա Վ Ո Ր Ք Ա Ր Տ ՈՒ Ղ Ա Ր

N 768-Ա

ՀՐԱՄԱՆ

«13» օգոստոսի 2021թ.

ԱՐԳԱՆՈՒՇ ԱՖՐԻԿՅԱՆԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԳԵՂԱՐՔՈՒՆԻ ՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ  
ՍՊՈՐՏԻ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԻ ԳԼԽԱՎՈՐ ՄԱՍՆԱԳԵՏԻ  
ՊԱՇՏՈՆՈՒՄ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 16-րդ մասի, 20-րդ մասի, 16-րդ հոդվածի 4-րդ մասի, «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի դեկտեմբերի 27-ի N 1554-Ն որոշմամբ սահմանված հավելվածը, ինչպես նաև 2021 թվականի օգոստոսի 12-ի Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչության կրթության բաժնի գլխավոր մասնագետի թափուր պաշտոնը զբաղեցնելու համար անցկացվող ներքին մրցույթի հարցազրույցի մրցույթային հանձնաժողովի եզրակացությունն ու Ազգանուշ Աֆրիկյանի անձնական դիմումը

հրամայում եմ՝

1. 2021 թվականի օգոստոսի 13-ից Ազգանուշ Աֆրիկյանին նշանակել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչության կրթության բաժնի գլխավոր մասնագետի (ծածկագիր՝ 94-1.4-Մ2-1) պաշտոնում:



2. Ազգանուշ Աֆրիկյանի աշխատավարձը սահմանել «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝

13.08.2021

X 

ՍԵՎԱԿ ԽԼԴԱԹՅԱՆ

Подписано: KHLGHATYAN SEVAK 4007580049

Ս. ԽԼԴԱԹՅԱՆ  
ք. Գավառ